

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐԻ»

ՆԱՍԱԿ ԿԱՐ ՈՅԻԼ ԲՂԹԱՅՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԲ Է ՈՒՂՂԱՆ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԼՍԱՐԱՆ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռաղիբներն ետ չեն գարձուր
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅՈՒԹԻՒՆ ԶՈՐԵՐԵՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ	
Գ. Կիլիկի համար	սարեկան 50
» » վեցամսեայ	30
Շրջակայից »	սարեկան 60
» » վեցամսեայ	35
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
Վեցամսեայ	» 10
ԲՈՒՍՈՒՆՆԵՐ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան	րուբլի 7
Վեցամսեայ	» 4
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՍՏԱՆԻ	
ԵՒ ԲՂԹԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԵՐԼԻՆԻ	
Թերթին վարչութեան վրայ է	

ՇԱԲԱԹ 4/17 ՆՈՅԵՄԲԵՐ

ՔՍԱՆ ՓԱՐՍՅ ՈՂՋ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 47

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ
ՍԿՍԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԿՆԻՔՆ ՈՒ ՔՍԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ
ՅԻՉ ՏԻՍԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓՍՉԵԱՆԻ ՍՏՈՐ
ՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի
ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱԵՐ ԿԸ ՆԿԱՏ-
ՈՒԻՆ:

Ս Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ն

Եղիպտոսի մէջ օրուան խնդիրներէն մին ալ սնանկութեան խնդիրը եղած է. անցեալ շաբաթ Աղեքսանդրիոյ մէջ բազմաթիւ սնանկութիւններ տեղի ունեցան. բայց Աղեքսանդրիոյ միջազգային դատարանը ամենայն խստութեամբ վարուեցաւ. այդ սնանկացեալներուն հետ. կարգ մը վճիռներ արձակուեցան շատ մը վաճառականներու սնանկութեանը վերաբերեալ՝ որոնցմէ շատ քիչերը կըրցան ոստիկանական և պատժական սնորհութիւնէն զերծ մնալ: Եւրոպացիներէն երեք հոգի, և տեղացիներէն վեց հոգի բանտը գրուեցան. մին՝ իւր վճարումները որ օր օր գազրեցուցած է, այն օրը ճիշդ յայտարարած չըլլալուն, միւսն ալ կանոնաւոր տետրակ բռնած չըլլալուն համար:

Ասկէ ութը ամիս առաջ տեղացի և կամ օտար հպատակ վաճառական մը որ իր պատիւը չէր ճանչնար, երբէք վախ չունէր իր սնանկութիւնը յայտարարելու նամանաւանդ զիւրերը առևտրով զբաղող տեղացի վաճառականները մէկ բանի հարիւր ոսկի ներս նետելէ վերջը, յանկարծ կը սնանկային ու վերջը վերջը ինչպէս կ'աղատէին իրենց օձիքը. «Մենք կարգալ գրել չենք զիտեր, զիւրերու առուտուրը արդէն չը վերցնէր որ երկար բարակ տետրակներ բռնէր մեր գործին համար»: Ահա՛ այս եղած էր բնարանը սնանկացող վաճառականներուն:

Այս սովորութիւնը այնքան ընդհանրացաւ որ այլևս պարկեշտ վաճառականներ ձանձրացան ու ասպարէզը սեղմուեցաւ անոնց համար. ասոր վրայ Ապրիլ ամսոյ մէջ երեցաւ

Խախտական հրովարտակ մը որ ինչ ինչ փոփոխութիւններ մտցուց սնանկութեան օրէնքին մէջ:

Ինչ ըրաւ օրէնքը:
Վաճառական մը որ իր գործին վերաբերեալ տետրակ բռնած չէ խիստ պատիժ սնորհուց անոր համար. բայց աստի կարգ մը նորանոր բարեփոխութիւններ մտցուց, որոնցմէ անշուշտ շատ զո՛հ չը մնային սնանկանալու փափաք ունեցող վաճառականները:

Գալով իրենց պատուոյն նախանձախնդիր վաճառականներուն, ասոնց համար նոր տէգրէթօյի ամիսը, յուսոյ երկընդոք աշուն մը եղաւ:

Ուրախ ենք յայտարարելու որ Եղիպտոսական դատարաններու տետրակները բարեբաղդաբար արձանագրած չեն Հայ սնանկութեանց անունները. եթէ վերջերս մի քանի սնանկութիւններ ալ պատահեցան, ասոնք իբր ձախորդութեան հետևանք ճանչցուեցան:

Անշուշտ այսպիսի բացառութիւն մը կարգ մը միշտ պատուարիւր կրնայ նկատուիլ մեր բազմաթիւ Հայ վաճառականներու, որոնք Եղիպտոսի Հայ գաղութին կարեւոր մէկ տարրը կը կազմեն:

ՄԵԾ ՄԱՐԿԱՍՊԱՆԸ ԵՒ ԱՐԱՔԿԻՐԻ ԶԱՐԴԸ

Արաքիւրի շարքը՝ Հայաստանի միւս գաւառներուն մէջ անդի ունեցած շարքերուն ամենէն քստմնելին ըլլալուն, կ'արժէ որ ամէն տարի անցեալը մոռացման մէջ չը թաղելու համար, մամուլը մէյմէկ էջ նուիրէ անոր յիշատակին:

«Լ'Օրօր» ֆրանսական թերթը՝ կ'երեւի թէ այդ նպատակաւ է որ «Մեծ Մարդասպանը» վերնագրով վերանորոգած է իր նոյնի. 5 թուոյն, Արաքիւրի շարքին մանրամասնութիւնները:

«ԱՅ Սեպտեմբերէն կը սկսի այդ քստմնելի կոտորածը. Թուրք կառավարութիւնը երբ մէկ կողմէն կը սկսէր վէճը բաժնետէրութեան և քուրդներուն, Հայերը սարսափահար

մէկ թաղէն միւս թաղը երթալու անգամ չէին համարձակիր, և շատերը խանութները գոցած տուն քաշուած էին. բայց խարբերիչ շարամիտ կուսակալը ամէն ապահովութիւն ցոյց տուաւ և չուկան սկաւ որդերութիւն առնուլ. ահա՛ առիթը, յանկարծ ազգապիտան քուրդներ, միւսլիմանները փողոց թափած կը պրտային «Ամէն անոնք որ Մոհամէտի դաւակ են կ'արժէ որ իրենց պարտականութիւնը կատարեն. պարտականութիւն մը որ է՝ սպաննել բոլոր Հայերը, այրել ու կողոպտել անոնց տունները. Հայու մը արիւն չը պիտի խնայուի, ահա Սուլթանին հրամանը»:

1600 կանոնաւոր զօրքեր, աջակցութեամբ 6500 քուրդներու և թուրքերու, Հայ չը թողուցին չը ջարդեցին Նոյեմ. 1-էն մինչև 5:

Եօլանի գիւղերը հիմնայտակ ըլին, որոնց մէջ գանուող Ամպէրիայէն 3 հոգի միայն ողջ մնացին, իսկ Շնիկէն 6 հոգի. 68 գիւղեր մոխիր դարձան. ասոնց մէջ որքան հոգի սպաննուած ըլլալը ճշդիւ գիտցուած չէ, բայց տարակոյս չի կայ թէ երկու երրորդէն աւելին սպաննուած է:

Գիւղերը բան մը չը մնալէ վերջ, գարձան քաղաքին վրայ, ու աննկարագրելի կատաղութեամբ մը յարձակեցան զէպի Հայոց թաղերը. երեք հազար Հայեր անխղճաբար թրէ անցուցին (*):

Ականատես վկայ մը կը պատմէ այս շարքին մանրամասնութիւնները, որոնց առջև ժայռէ սրտերն իսկ չեն հանդուրժիր. ահաւասիկ.

«Թուրք և քուրդ ասպատակները տարբեր եղանակներով յագուրդ տըւին իրենց վայրենական կիրքերուն. ոմանք նետեցին կրակին մէջ ու ողջ ողջ այրեցին: ոմանք կախեցին զլիւի վար ոչխարի մը պէս, ու զանակը զարնելով վզերնին մորթեցին. ոմանց մորթը կացինով կտոր կտոր ըրին:

(*): Գէտք էր յիշել հոս Արաքիւրի Հայոց այն անուրամալի քաջութիւնը որով 12 օր անըտար դիմադրեցին թուրք և քուրդ ասպատակներու կատաղի յարձակման դէմ, մինչև այն վայրկեանը ուր այլևս ոյժ և պաշար սպառած ըլլալով, անմատուր եղան ու ատոր վրայ է որ երեք հազար հոգի ջարդուեցան:

ամանց վրայ բէթրով թափելով ողջ ողջ այրեցին և բոցին տակը ուրիշները փղձկամահ ըրին. ոմանք ալ բունեցին ողջ ողջ հողին տակը թաղեցին. կանանց ստիւքները կտրեցին, որոնց ցաւէն կսկիծէն տանջանքով մեռան. յիւ կիներուն արգանքները կտրեցին ու ֆէթիլները ոչնչացուցին. մայրերը սպաննեցին արպէսի Հայ սերունդին հետք չի մնայ:

3000 Հայ տուններէ հազիւ 150 տուններ ազատեցան և ազատուողները բանտարկուեցան:

Հետեւեալ նամակը, զոր Տ. Թ. Ֆատուրեան հանրապետական զրկած է մեզի, անկողմնակալութեամբ կը հրատարակենք:

... Վարչութիւն «Նոր-Օր»-ի

Չեր Պատ. Թերթին 46 թիւին մէջ ուշադրութեանս հանդիպեցաւ յօդուած մը «Չինոզ» ծածկանունով տակ որուն մէջ Պ. յօդուածագիրը չեմ գիտեր ինչ փափակապատեմամբ է որ ծածկել ուզած է իր անունը, բանի որ ինչիքը ըստ ինքեան պարզ է:

Ատի մի բաղադրար կերպիւ գրուած մը ըլլալուն, ի պատասխանի հակիրճօրէն կը յայտարարեմ թէ՛ իմ կազմակերպած չորս ներկայացումներուն սնորհութեան կը փութամ հրատարիլ այսօրուընէ, և իմ Գահիրէ գտնուած միջոցիս, ու որ կը փափաքի ըստանձնել այդ ներկայացմանց հոգը, պատասխատ եմ իմ անդս անոր ընծայել, և եթէ պէտք զգացուի՝ մասնակցիլ ըստ արժանոյն վարձքով մը:

Արդէն Չեր Պատ. Թերթին իր աներկայ լրջութեամբ այնքան պատկառանք ներշնչած է որ վստահ եմ թէ ունէ ձայն Չեր Թերթին միջոցաւ արժելի չի մնար, բանի որ զուր գիտակցութիւնն ունիք ընտրութիւն ընելու բարձրացած բողոքներու լրջութեան:

Ահա՛ իմ պատասխանս Պ. Չինոզին:

Գալով անկէց առաջ տեղական Հայ Թերթի մը մէջ «Պ...» սկզբնառաւով երեցած յօդուածին՝ երբէք չը պիտի զիջանէի պատասխանել անոր, եթէ Չեր Պատ. Թերթին մէջ Չինոզ ծածկանունով յօդուածը հիւրընկալուած չըլլար:

Որքան գոհ եմ այդ յօդուածի հրատարակութեանը չոր յանձնարարելով Պ. «Պ...»-ի ուշադրութեանը, ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլամ իրեն, որ իբր հրապարակագիր բաղադրեալ զայն իր գրածին հետ. վստահ եմ թէ անմիջապէս պիտի կրնայ հաստատել իր գրածներուն արժանիքը... Թերթես Պ. Պէտեան իսկ իր անկողնոյն

մէջ ցաւ զգացած ըլլայ իր դատը յանձնուած ըլլալուն այնպիսի պողարքեր գրչի մը որ իրմէ աւելի կարօտ է բժշկի, դեղի, խնամքի . . . այս խօսքերը փոխ առնելով նոյն ինքն Պ. «Չննդ»էն, որ Պ. Պէն. լեանի պաշտպանն յաջողած է ըլլալ «Նոր-Օր»ի մէջ:

Արդարեւ Պ. Պէն. լեանի հիւանդութիւնը որքան ցաւ պատճառեց ինչ իբր արհեստակից, որուն համար ամէն զոհողութիւն յանձն առի, հակառակ իրենց իմ նկատմամբ ցոյց տուած աննեղելի վարմունքներուն, այնքան ալ Պ. Պ. . . ի յօդուածը ծիծաղաւ շարժեց իմ և յարգելի հրատարակագիրներուն:

Մէկ մէկ օրինակ այդ նմոյշէն եթէ կարելի ըլլար պիտի զրկէի Պ. Հրանտ Ասատուրին, Պ. Գրիգոր Զօհրապին. Պ Տիգրան Արփիարին, որոնք զրուստանօք խօսած ու գրած են իմ վրաս ժամանակին: Պիտի զըրկէի այդ յօդուածը, ոչ թէ իմ անձիս դէմ եղած յարձակումը մատնանիչ ընելու համար, հապա իբր խնամարարական, ինչ դեր կրնայ կատարել ի նպաստ Պէն. լեանի. առտոր քաջալերական պատասխանը բերելու համար:

Ասով չեմ ուզեր վհատեցնել հրատարակագիր մը որ թերեւ ժամանակին փորձառութեամբ, եթէ կոչուած ունի այդ ասպարիզին մէջ, թօթուէ խաւառն խակութեան ու տգիտութեան. բարեցէ իր ոճն ու լեզուն. մենք ալ ուրախ կ'ըլլանք այն ատեն շնորհատրելու նոր հրատարակիչ մը որ ինքնակոչ չէ այլևս:

Ահա՛ իմ պատասխանս ալ Պ. Պ. . . ի գրած յօդուածի մասին. յարգող ընթերցողաց կը թողում յիշեալ երկու յօդուածներուն տարբերութիւնը զանազանել:

Կ'անցնիմ բուն ինչոյս թէ՛ ինչու համար Պ. Պէն. լեանի խումբը շուրջս հանեց այսքան աղմուկ:

Անցեալ տարի Նոյեմբեր ամսոյ մէջ էր որ եկայ Գահիրէ, անմիջական գարման մը գտնելու համար, նոյն երկրին կլիմային ներքեւ, հիւանդութեանս որմով կը ստառակի:

Հագիւ մեղմացած էր հիւանդութիւնս՝ Յունիսար ամսոյ մէջ, Գահիրէի Լաբան-Ընթերցատուն ընկերութեան կողմէն հրատարակեցայ՝ ի նպաստ սոյն ընկերութեան տրուելիք ներկայացումը կազմակերպել իմ սնօրինութեանս ներքեւ:

Ներկայացումը չը տրուած, մեր յարգելի արհեստակից Պ. Պէն. լեան, այսօր հիւանդ, ինձի առաջարկեց այն ատեն որ 2 հարիւր ֆրանք առնեմ ու իրենց ձգեմ ներկայացման կազմակերպութեան հոգը, որուն մէջ անշուշտ շահ մը ունէին. մերժեցի առաջարկը և փոխանակ 2 հարիւր ֆրանքի բաւականացայ 70 ֆրանքով աշխատիչ, որովհետև սկզբունքի ինչոր մ'էր ատի, բանի որ ի նպաստ կրթասիրական հաստատութեան մը տրուած ներկայացման անգամ մը խոստացած էի իմ անձս ծառայեցնել բեմին վրայ:

Եւ ուրախ եմ որ այդ ներկայացումը արտադրեց համեստ գումար մը, որով ձեռնարկեցաւ մեզ պատիւ բերող Լաբանի մը հաստատութեան՝ ունենալով մինչև իսկ իր օսկանը «Նոր-Օր»:

Ահա, այս է անդրանիկը այն 4—5 ներկայացումներուն գոր ստի յաջորդաբար Գահիրէի մէջ. թողտուութիւնն կունենամ զիտեղ տարու թէ՛ ըստ թատերական սովորութեան միշտ դերասան մը առաջին ներկայացման (տէպիւ) արդիւնքը իրեն կը վերապահէ. հակառակ այս սովորութեան և իմ հիւանդութեանս, չ'ընդունեցի ի սեր Լաբանի ընկերութեան այդ շահը:

(Շարունակելի)

ՓԱՐԻՋԻ ԵՒ ԳԱԶԻՐԷԻ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ

ՓԱՐԻՋԻ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ. — Վերջերս Թրանսական կառավարութիւնը նկատի առնելով Փարիզի ժողովրդեան օր ըստ օրէ բազմանալը՝ ծրագիր մը պատրաստեց և Փարիզը ընդարձակելու. ծրագիր մը որոյ գործադրութեանը համար հարիւրաւոր միլիոններ պիտի ծախսուին:

Արդարեւ Փարիզի բնակչութիւնը այսօր երեք միլիոնը կ'անցնի, առանց հաշուելու իր շուրջը գտնուած արուարձաններու բնակչութիւնը. եթէ ասանք ալ մէկտեղ հաշուին՝ մինակ Բարիզի ժողովուրդը վեց միլիոնի կը մտնենայ:

Յիշեալ ծրագրի համեմատ Նէոյի և Պուլսնի արուարձանները քիչ ատենէն Բարիզի մէկ մասը պիտի կազմեն, այսինքն Բարիզի պարիսպներուն այդ կողմը ամբողջ պիտի քակուի, և այդ երկու արուարձանները առկէ վերջը պիտի համարուին, Բարիզի մէկ պարզ թաղերը:

Այս կերպով Պուլսնի ծառաստանները իրենց գեղեցկութիւնը պիտի կորսնցնեն, և քաղաքի մը ժխտրին կեդրոնը պիտի ըլլան. բայց Թրանսական կառավարութիւնը առանց այդ նկատումներուն նայելու, ժողովրդեան անգործութեանը համար ստիպուած է իր ծրագրերը գործադրել:

ԳԱԶԻՐԷԻ ԸՆԴԱՅՆՈՒՄԸ. — Նոյնը Գահիրէի համար կ'ընեն ըսել. երեք տարի առաջ Իսմայիլիէի թաղը՝ ծառաստաններով և պարտէզներով օժտուած գեղեցիկ գիւղաքաղաքի տեսարանը ունէր, մինչդեռ այսօր այդ պարտէզները հետզհետէ վերանալու վրայ են, ու անոնց տեղը կը շինուին կորտուներ ու խանութներ. այս վերջին տարուան մէջ հարիւրէն աւելի ընդարձակ տուներ ու խանութներ կանգնուեցան Իսմայիլիէի թաղին մէջ, ինչպէս նաև Սալցի 0թէյը, Պանդ Նասիմայը, Պանդ 0թօմանը, Լուվըր եւ այլն. այս հաշուով քիչ ատենէն ամբողջ Իսմայիլիէի թաղը եւրոպական շուկայի մը վերածուած պիտի աւանդէ. ու չը պիտի գտնէք այն պարտէզները որ երբեմն կը բուրբին:

Գալթթաութիւններու ընդարձակ պարտէզը մէջի բնակութեան շէնքով ծախու գրուած է, ուր առողջապահական գրութեամբ քսան տուն և վաթսուն խանութ շինուելու ասպարէզ կայ կրանն:

Անցեալ տարի Պէլճիզական անանուն ընկերութիւն մը կազմուեցաւ որ բանակցութեան մտած էր Էլպէքիյէէն սկսեալ մինչև Թուսնի Խայիկ գնացող պողոտային երկու կողմի կառուածատէրերու հետ, որոնց մէկ մասը հաճուելին տուած են ծախելու իրենց կալուածները. կրնաք ենթադրել որ մէկ երկու տարի վերջը մինչև Թուսնի Խայիկ պիտի կրնայ երկարել այդ շուկան:

Գահիրէ մէկ կողմէն դէպի Թուսնի Խայիկ ընդարձակուելէ վերջը, միւս կողմէն դէպի Պուլազ և ընդարձակուելու պատրաստուած է:

Պուլազ ուրկէ 6—7 տարի առաջ

անցնելու կը գտնէր մարդ, այսօր մասքուր թաղեր ունենալու վրայ է եւ Թուսնիայի հաստատութեան ի վեր մէջընտն տասը գահեկանէն յիսունի բարձրացած է, և կը կարծուի որ մէկ տարուան ժամանակամիջոցին մինչև Երզնա պողոտային երկու կողմը տուներ և խանութներ շինուին նոր գրութեամբ ու Իսմայիլիէի և Էլպէքիյէի շուկային շարունակութիւնը ըլլայ Պուլազ ևս:

Ապագայիցի կողմէն ալ ընդլայնուելու վրայ է Գահիրէ. միայն թէ Ապագայիցի նախկին Իսմայիլիէի տեղը պիտի բռնէ և դեռ շուկայի վերածուելու համար ժամանակի կարօտ է. Ապագայիցի՝ մահմետական փաշաներու և աղտուականներու կեդրոնն է առայժմ:

Ահա այսքան անշուշտ արագութեամբ կ'ընթանայ Գահիրէի ընդլայնումը:

ԽՐԱՏՆԵՐ ԲԵՌՈՐԴՈՅՍ

Բարե՛, պէպէ՛, որքա՛ն աղւոր ևս այս առտու:

Պաշիկ մը, պաշիկ մը ևս, նա՛:

Հիմա՛, վար ա՛ն թաթիկներդ և մտիկ բրէ՛ մօրարկդ:

Հաղի երեք ամուս ես, տակալին անուն մը իսկ չունիս, բեզ մարդու տեղ կը գնեմ, սե՛ն, և կուզամ հեղ խօսակցիլ:

Քառասուն զարե՛ր բուրբերուն բարձունքէն՝ վրաս կը խնայեմ, որո՛ւ հոգ, բաւական է որ գու կը ժպտիս և այգպէս արքայութեան վրայ գաղափար մը կուտաս ինձի, իմ աղւոր պէպէս, շօշափելի հրեշտակս:

Վերջին պաշիկ մըն ալ, օ՛խ... սիրմ՛:

Կեանքը կարճ է և անակնկալներով լեցուն, ուստի մարդահամարի տեսրակէն աւնունս սրբուելէ առաջ, պարտաւանութիւն մը կ'զգամ բեզի տալ ինչ մը խրատներ որոնցմէ կրնաս օգտուիլ քանի մը տարի վերջ:

Նախ, խրատս ըլլայ բեզի, երբէք թո՛ղ մի տար որ հինգ կամ վեց տարու եղած ատենդ, ծնողդ սալունին մէջտեղ քաշեն զքեզ և ստիպեն որ զարոցը մուսնուգէլին սորվեցուցած կաղանդի ֆուլքիլանկ և կամ ճպարտին առակը արտասանես հիւրերու առջև:

Բան մը ևս կայ, չի մոռնամ:

Երբ սպասուհին գայ դրան առջև կայնի և հրաւիրէ զքեզ երթալ պատկելու, չըլլայ որ մամաին խօսքին հնազանդիլու նպատակաւ սալունին շքանը ընես ներկաներուն ձեռքը մէկիկ մէկիկ սեղմելով:

Փողոցին մէջ շնորհքով բալէ, պարիեշտ շարժուածք մը ունեցիր, աչքերդ պատուհաններուն վրայ մի պարեցնիր, միշտ առջիկ նայէ . . . կարիւրի և գետնէն բան մը կը գտնաս:

Յաճախած մարդիկդ, նայէ՛ որ քենէ մեծ ըլլան, և կիները քենէ պտտիկ:

Մերթաբ այն թատրոնները ուր միջնաբերդներ երկայն են և շքազգեստները կարճ:

Եթէ սիրոյ ի՛նչ ըլլալը կուզես գիտնալ, օտարազգի աղջկան մը հետ սիրաբանէ. կտրէն Հայ աղջկան սը հետ առուստացի, հոգ չէ:

Եթէ օրին մէկը, Աստուած չ'ընէ, կեսարացի փաճառականի մը քով զրագրութիւն

ընելու հարկին մէջ գտնուիս, նախ անձնապան եղիւր և յետոյ սկսէ գործի:

Կեանքի մէջ յաջողելու համար, որքեա՛կ, ոչ ինչք պէտք է ոչ ուսուցիչ, toupet ունենալը բաւական է:

Սիրող թաղական ըլլալ ուզէ նէ Աղերասանորիս բնակէ:

A propos եթէ Աղբատարնամ ընկերութեան բնարութիւններու միջոցին տուած բուկ մօրաբերոյ տունէն գրած ես, անվաւեր է, եթէ կուզես որ վաւերական ըլլան, թշնամիներու մօրաբերոյ տունէն գրէ:

Ես, անգամ մը, ասանկ չ'ընելուս անանկ զղջացած եմ որ. . . :

Եթէ Քրիստոսի բաժին պէս միմիայն երկու շապիկ ունենաս, մէկ հատը դուն հասցիր միւսն ալ. . . լուսաւ դրիկ:

Ասկց բասն սարի վերջը, օր մը Պէնի Սուրենին անցած միջոցիկ եթէ նորին անունայի Տէր կարասիտը դիմացդ կ'ըլլայ, անոր ալ բարի բրէ՛:

Յ. Ա. ՓԻՍՏ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ուրախութեամբ կը տեղեկացնենք թէ՛ Արթ. Տ. Սրբապիտն քահանայ Սամուէլեան, Ռուսաստանէն Գահիրէ եկած է ուր տասն և հինգ օր անցընելէ վերջը պիտի վերադառնայ իւր երկիրը:

Վսեմ. Տիգրան փաշա սիրալիր ընդունելութիւն ըրած է՝ անցեալ աւուր Ն. Արթ. այցելութեան միջոցին:

Սրբապիտն քահանայ վկայեալ է Չուկիցերիոյ և Գերմանիոյ Համալսարաններէն, և ազգին գիտնական ու արժանաւոր քահանաներէն մին է:

Արթ. Տ. Հայրը, վաղը, կիրակի, Նոյ. 18, տեղույս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ պիտի պատարագէ:

ՊԱՐՄԻՅ ԵՒ ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԸ. — Երբ Պոլիս եղած ատենը Պատրիարքը Դուռէն հրաման կը խնդրէ որ երթայ Պարսիկ վեհապետին երախտագիտութիւն յայտնէ հայերու ըրած հոգապետութեանը համար: Դուռը մերժեց և ստիպայ. Պատրիարքի այս դիտաւորութիւնը Երբ հին ահանջը ձգեք է վիէննայի Պարսից Հայագիւր դեսպանը՝ Նարիման խան, որուն այսպէս ըրած է Երբ.

«բարեւ ըրէք հայոց Պատրիարքին և ըսէք թէ՛ հայերը Պարսկաստանի մէջ՝ միշտ մամաւոր հոգածութեան ներքեւ են: Պարսկաստան հայերէն միշտ օգուտ և պետական արժանիք տեսած է անոնց մէջ»:

ԵՍՂԸ ԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆ ԵՂՐԱՐԳ. — Երբ Պաքու գնալու ատեն իջևաներ է թումանեան եղբարց տունը, որոնք վեհապետին և անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրեր են 42 սենեակ, Ն. Վ. Արիւս-Արիւս առաջին աստիճանի շքանշանը տուեր է այդ մեծ առեւտրական տան գլխաւոր Պ. Սարգիս Թումանեանին, պայմանաւ որ այդ պատուանշանը ժառանգական ըլլայ:

ՊԱՐՄԻՅ ՄՈՒԶԱՅԱՐ-ԷՏ-ՏԻՆ ԵՒ ԵՂՐԱՐԳ. — Երբ Պաքու գնալու ատեն իջևաներ է թումանեան եղբարց տունը, որոնք վեհապետին և անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրեր են 42 սենեակ, Ն. Վ. Արիւս-Արիւս առաջին աստիճանի շքանշանը տուեր է այդ մեծ առեւտրական տան գլխաւոր Պ. Սարգիս Թումանեանին, պայմանաւ որ այդ պատուանշանը ժառանգական ըլլայ:

ՊԱՐՄԻՅ ՄՈՒԶԱՅԱՐ-ԷՏ-ՏԻՆ ԵՒ ԵՂՐԱՐԳ. — Երբ Պաքու գնալու ատեն իջևաներ է թումանեան եղբարց տունը, որոնք վեհապետին և անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրեր են 42 սենեակ, Ն. Վ. Արիւս-Արիւս առաջին աստիճանի շքանշանը տուեր է այդ մեծ առեւտրական տան գլխաւոր Պ. Սարգիս Թումանեանին, պայմանաւ որ այդ պատուանշանը ժառանգական ըլլայ:

ՊԱՐՄԻՅ ՄՈՒԶԱՅԱՐ-ԷՏ-ՏԻՆ ԵՒ ԵՂՐԱՐԳ. — Երբ Պաքու գնալու ատեն իջևաներ է թումանեան եղբարց տունը, որոնք վեհապետին և անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրեր են 42 սենեակ, Ն. Վ. Արիւս-Արիւս առաջին աստիճանի շքանշանը տուեր է այդ մեծ առեւտրական տան գլխաւոր Պ. Սարգիս Թումանեանին, պայմանաւ որ այդ պատուանշանը ժառանգական ըլլայ:

ՊԱՐՄԻՅ ՄՈՒԶԱՅԱՐ-ԷՏ-ՏԻՆ ԵՒ ԵՂՐԱՐԳ. — Երբ Պաքու գնալու ատեն իջևաներ է թումանեան եղբարց տունը, որոնք վեհապետին և անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրեր են 42 սենեակ, Ն. Վ. Արիւս-Արիւս առաջին աստիճանի շքանշանը տուեր է այդ մեծ առեւտրական տան գլխաւոր Պ. Սարգիս Թումանեանին, պայմանաւ որ այդ պատուանշանը ժառանգական ըլլայ:

ՊԱՐՄԻՅ ՄՈՒԶԱՅԱՐ-ԷՏ-ՏԻՆ ԵՒ ԵՂՐԱՐԳ. — Երբ Պաքու գնալու ատեն իջևաներ է թումանեան եղբարց տունը, որոնք վեհապետին և անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրեր են 42 սենեակ, Ն. Վ. Արիւս-Արիւս առաջին աստիճանի շքանշանը տուեր է այդ մեծ առեւտրական տան գլխաւոր Պ. Սարգիս Թումանեանին, պայմանաւ որ այդ պատուանշանը ժառանգական ըլլայ:

ՊԱՐՄԻՅ ՄՈՒԶԱՅԱՐ-ԷՏ-ՏԻՆ ԵՒ ԵՂՐԱՐԳ. — Երբ Պաքու գնալու ատեն իջևաներ է թումանեան եղբարց տունը, որոնք վեհապետին և անոր հետեւորդներուն տրամադրութեան տակ դրեր են 42 սենեակ, Ն. Վ. Արիւս-Արիւս առաջին աստիճանի շքանշանը տուեր է այդ մեծ առեւտրական տան գլխաւոր Պ. Սարգիս Թումանեանին, պայմանաւ որ այդ պատուանշանը ժառանգական ըլլայ:

ածին գացեր է. եպիսկոպոսական գասն ու ամբողջ միաբանութիւնը զի- մաւորելով ն. վ. ք առաջնորդեր է դէպի վանք, ուր վեհափառ կաթողի- կոսը ընդունել է Նորին մեծութիւնը. Շահը վանքի ամեն տեղերը այցե- լելէ վերջ, մէկ ժամ կաթողիկոսին քով մնացեր որուն շնորհներ է Արծիւ- Արեւի առաջին կարգի պատուանը- շանը:

ԴԱԽԱՆԱՓՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Անտիոքի հայ բնակչաց մէջ դաւանա- փոխութեան խրոտումը ծանուցուած էր Պատրիարքարան, որ բացատրու- թիւն պահանջած էր տեղւոյն առաջ- նորդէն: Վիճակին առաջնորդական փոխանորդ Թադէոս վարդապետը կը գրէ թէ՛ տեղւոյն վարժարանները նիւթապէս և բարոյապէս անբաւա- կան և անզոհացուցիչ են, և ասոր հակառակ լատին վարժարաններն՝ ոչ միայն ձրի ուսում, դասագիրք, զգեստ, և մինչև իսկ կարօտներուն ալ դրամ կուտան, այդ պատճառաւ, հրապուրուած է ժողովուրդը. և այդ վիճակին առաջին անհելու համար՝ Պատրիարքարանի կ'առաջարկէ որ՝ առնուազն 150 ոսկի նպաստ մը սահ- մանէ յիշեալ վիճակի դպրոցներուն, պայմանաւ որ պակաս զուամբը կա- րող ազգայիններէն հայթայթէ, որ պէս զի կարողանայ ինքն ալ համո- զել իր ժողովուրդը, որ միևնոյն պայ- մաններուն տակ շարունակեն իրենց զաւակները զրկել Ազգ. վարժարան- ները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՁԻՆԱՍՏԱՆ

Ձինաստանի մէջ կազմուող առժա- մեայ Միջազգային զինուորական դա- տարանը՝ Ձինաստանի հինգ երևելի մանտարէնները մահուան դատապար- տեց, այն մանտարէններն են տանը որ Ձինաստանի երազացիներն ու քրիս- տոնեայինները չարաչար կերպով հալա- ծած ու խոչտանգած են:

Այդ իշխաններէն մէկ երկու հոգին մահուան կը դատապարտուին, անմի- ջապէս վորձ կ'ընեն ինքզինքնին թու- նաւորելու. որովհետև աստիք կը վախ- նան որ եթէ գլխատուին, իրենց գը- լուխը մարմնէն զատուած ըլլալով՝ այլ եւս արքայութիւն չեն երթար. հետեւ- ւաբար եթէ հրայանուով սպանուին երկու զ չունին:

ԿՈՄՍ ՎԱՍԿԵՐՍԵՑ. — 6000է աւելի Պարսէներու յաղթած է. Ռուսաց կող- մէն 4 հոգի սպանուած ու 61 հոգի վիրաւորուած կայ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ՄԱՐՈՒՅԻ ԴԱՏԸ. — Չորեքշաբթի օրը գատավարեց Տ. Ս. Փափաղեան Գահիրէի Միջազգային դատարանին առջեւ Պուլսքի կից Մարուֆի հանրա- ծանօթ դատը, որուն մասին ասկէ ա- ռաջ տեղական թերթերը գրած էին. վճիռը ութը օրուան յետաձգուեցաւ,

սոյն դէպքին մանրամասնութիւնը յա- ջորդ թուով:

ՍԱՅԻՏԻ ԶԷՏՆԵՊԻ ՈՃԻՐԸ. — Ինչ- պէս անցեալ թուով ծանուցած էինք, ահաւասիկ Սայիտէ Զէյնէպի ոճիրին մանրամասնութիւնները:

Խալիլ Ալիի տուած տեղեկութեանց համաձայն՝ Ահմէտ Վահպի և Ահմէտ Ապախլաթի անուն անձինք տանը դուռը կը չալեն. ծառան կը բանայ- անմիջապէս դուռը կը դոցեն ու դրա- նը ետև ծառան կը խեղդեն. վերի յարկը կ'ընեն ուր տանը տիկինը նըս- տած կը գտնեն աթոռի վրայ, աղա- խինն ալ իր քովը. նախ կացինի մէկ հարուածով կը սպաննեն աղախինը, անկէ վերջը կ'նոյ վրայ կը յարձակին ու անոր ալ գրուել կացինի երկու հարուածով կը ձեղքեն. տունը տեղը արիւնլուայ ընելէ վերջը՝ ամենայն պա- զարիւնութեամբ ձեռուընին կը լուան ու կամացուկ մը կը պրծին դուրս:

— ԵՂ ԵՒ ՄՏԻՑ Նախարարութիւնը պարտուց Մետուկէն 25,000 եգիպտ. ոսկի պիտի պահանջէ Բոր-Սայիտի՝ մէջ նոր թղթատուն մը շինելու հա- մար:

— ՕԲԵՐԱՅԻ Ֆրանսական թատերա- կան խումբը Մէսսաթըրի Մարիթիմ ընկերութեան շոգենաւով եկած է Գահիրէ: Խումբը իր առաջին ներկա- յացումը պիտի տայ ամուս 24ին:

— ԼՈՐՏ Գրոմբըր Դեկտ. 14ին Սու- տան պիտի մեկնի: Ն. Մ. Խարթում պիտի մնայ, և Յունվար 6ին Գահիրէ պիտի վերադառնայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բարոյի լրագրողը իր կողմէ նա- մը վարձած էր, որով Պ. Գրուկէրի համակիրները պիտի երթային Բոր- Սայիտ՝ Նախագահը դիմաւորելու հա- մար: Յիշեալ թերթը Սէն-Բէթըր- պուրկէն նոյ. 6 թուով հեռագիր մը կ'ստանայ, որով կը խնդրուի որ յիշ- եալ նաւուն վրայ տեղ մը յատկաց- ուի երկու ուսու գոմիթէներէ բազ- կացեալ մասնաւոր պատգամաւորու- թեան մը համար, որ Պ. Կէրլօֆի ա- ռաջնորդութեամբ շտակ Մարսիլիա պիտի երթան:

— Հետաջ կը յայտարարէ թէ՛ Ռու- սիան եկող տարի հինգ նոր զրահա- ւորներ պիտի չինել տայ երկու ամե- ըրկացի նաւաչէններու, որոնց պիտի վճարէ հարկը միլիոն ֆրանք:

— Իտալիան բանակցութիւններ կա- տարեր է Լոնտոնի գրամատէրներու հետ 375 միլիոն ֆրանքի փոխառու- թեան մը համար: Այս գումարը պի- տի յատկացուի նաւատորմի շորո- գութեանը համար: Անդրիական կա- ռավարութիւնը համաձայն է ասոր:

— Շանկհայէն «Սթանտարտի կը գրեն:

Չունկ-Ուէնկ-Թաօէն եկող նաւա- տի մը կը պատմէ թէ՛ Ռուս սպայ մը 60 զինուորներու գլուխ անցած, նոյն տեղւոյն մէջ գտնուող անգլիա- կան քանի մը զօրքերէ և մէկ սպայէ բազկացեալ շոկատի մը գրոշակը, որ կը ծածանէր հոն՝ վար առած է: Անգլիացի սպան կը բողբէ ասոր

և. գրոշակը նուէն տեղը դնելու վոր- ձեր կ'ընէ, բայց ուս սպան կ'սպառ- նայ կրակ ընել, և ասոր վրայ Անգ- ղիացիք տեղի կուտան: Կ'ըսեն թէ ուս սպան ի վերջոյ ներքայ թիւն խնդրեր է:

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Սկանիկ մէջ գուարձալի դէպք մը պա- տահած է որ կրնայ վիպասանութեան մը նիւթ կազմել: Մեծ ապարանքի մը մէջ իր- բե սպասուէի ծառայող գեղանի աղջիկ մը կը նշանուի մօտը բնակող հարուստ անձի մը տղուն: Աղջիկը վստահ իր գեղեցկու- թեանը, թիչ մը հպարտութեամբ կը վար- ուի և հրամաններ կը տեղացնէ նշանածին պիտուն: Տղան, ձանձրացած աղջկան այդ յաւանութիւններէն, կ'ուզէ իր սիրած ուրիշ մէկ աղջկան հետ ամուսնանալ, բայց հայրը կ'ընդդիմանայ և երիտասարդը կը ստիպուի համակերպիլ: Վերջապէս հարսանիքը կ'ո- թոշուի. պատրաստութիւններ կը տեսնուին. քահանայն կը հրաւիրուի եւսյն: Փեսան քա- նի մը բարեկամներով հարսին տուած կ'եր- թայ. զայն իր տունը տանելու համար, բայց աղջիկը իր գեղեցկութեանը անհամա- պատասխան կը գտնէ այդ անուշ հրաւերը. նուագարաններ և կառք կը պահանջէ. և զայրանալով կը սպանայ թէ եթէ կառք չեներուի, պիտի չերթայ: Տղան շատ կ'աշ- խատի համոզել, բայց չի յաջողի և վեր- ջապէս առանց հարը անհելու կը վերա- դառնայ և եղածը հօրը կը պատմէ: Մար- դը ամէնէն աւելի եղած ծախքերուն համար կը բարկանայ և կը սկսի մտածել թէ ինչ ըսելու է քահանային և հրաւիրեալներուն: Տղան առիթն օգտուելով կ'ըսէ հօրը թէ ինչ արդէն այդ աղջիկը չի սիրեր, թէ իր ազգականներէն ուրիշ աղջկան մը տուած է սիրտը և թէ քանի որ պատրաստութիւններ տեսնուած են, աւելի աղէկ է որ բուն իսկ իր սիրած աղջկանը հետ ամուսնանայ: Հայրը կը հաւանի: Աւելորդ է ըսել թէ տղան ո'րքան հպարտալի աղջկան տունը կը փութայ և կ'արթնցնէ զայն. աղջիկը ի- մանալով ու իր սիրածը ուրիշ հետ նոյն գիշերը կ'ամուսնանայ տխուր պահած էր: Տղան երբ հոն հասնելով եղածը կը պատ- մ, ոչ ոք կը հաւատայ. վերջապէս աղջի- կը կը հաճի և վեպին թըր մանելով կ'եր- թայ անոր տունը և հոն կը կատարուի այդ անակնկալ հարսանիքը: Պիտի հարցուի թէ միս աղջիկը ինչ եղաւ: Անիկա սոխտակ շրջապահտը հագած և իր գեղեցկութեանը վրայ վստահ կը սպասը կառքերուն գա- ընէ, բայց երդ չկար: Բնակարանաբար երբ հետեւեալ առտուն իմացուեցաւ թէ իր տեղ ուրիշ մը հարս եղած է, անուշտ որոշեց այլեւս կառք չպահանջել:

ԱՐԵՒԵԼԻՔ

ԿԱՊՐԻԷԼ ՄՈՒՐԷՅՅ

ՍՕԼԱՆԺ

Աշխարհիս վրայ միակ կինը զոր կը սիրէի իմ բոլոր սրտովս, խելքովս, մտքովս, վերջապէս բոլոր էութեամբս, և, այնպիսի սիրով մը որ կրնայ ոճիրներ գործել տալ, կամ խնդրութիւն մ'ընել տալ մարդու՝ տղեղ էր: Սոլանժ ո'չ միայն ուրիշներու սչըն, այլ իմ աչքիս ալ տղեղ էր ու եր- բէք, մեր ամենասերտ մտերմութեանց մէջ

անգամ, գեղեցիկ չէր երեցած ինձի. ապա եթէ գեղեցիկ ըլլար, ասկէ աւելի երջանիկ ելած կրնայի՞ ըլլալ. սէքս աւելի սաստիկ պիտի ըլլար և կամ իր տուած երանու- թիւնը աւելի պիտի ըլլար. բայց ա- տա՛յ, չէ՛ որ մարդս ու երջանիկութիւնն ալ իր սահմանն ունի,

Սոլանժ նրբակամ էր ու տկար, և երբ ամուսնացանք, թէպէտ երեսունը անցուի էր, սակայն 16 տարեկան աղջկան մը կը նը- մանէր:

Այո՛, տկար էր Սոլանժ, բայց հիւան- դոտ չէր, և այդ տկարութիւնը գեղեցկու- թիւն մը կուտար իրեն, և զիւրաթեցութիւնը հմայք մը: Դանդաղ էր իր շարժումներն ու խանջեալ՝ իւր շարժումներուն ու խօսքերուն մէջ. այնպէս որ միշտ՝ բունէն նոր արթն- ցող աւանդակէ պի իշխանութիւնը կերպա- բանքն ունէր:

Բայց կենաց շունչը խեղճուկ Սոլանժին այնքան անկեղծ ու թարմ հոգին սարուե- ցուց, սիրոյ լքումը թըրթաղաց անոր այն- քան վեհանձն ու հասնուած զգայնութիւնը:

Ինձմէ առաջ ոչ ոք սիրած էր զինքը, ո'չ մարդիկ, ո'չ անասունք. — շատ ամէկոտ էր, ամեն մարդէ կ'ամո՞չար. և այնչափ ա- նուշութեամբ կը խօսըր ամենուն հետ, որ չէր հանդիպած մէկու մը որ զգայնիկ կ'ախ- ջով մը կարենար զինքը լսել:

Անգղէ մը հալածուող թռչնիկի մը պէս՝ իմ գորովանացս մէջ ապաստանած էր, և վախը դեռ սրտին, միշտ կասկածոտ իր փրկութիւնէն, կը կծկուէր հոն . . .

Ինչո՞ւ կը սիրես զիս, ինչպէս եղաւ որ դուն զիս սիրեցիր ասանկ, կ'ըսէր ինձ Սո- լանժ յաճախ:

Ես ալ չեմ գիտեր, բաւական է որ կը սիրեմ, կը պատասխանէի:

Եւ ինք իրօք, բաւական է որ կը սի- րես . . . բաւական է որ կը սիրես . . . կը կրկնէր ուրախ ձայնով մը:

Իրաւ որ չէի գիտեր . . . բայց ո՞վ ինչ գիտէ աշխարհի վրայ: Ասկէ զատ՝ ինձի ինչ՞ իրաց, ծաղիկներուն, լուսոյ, կենաց . . . և մահուան պատճառը: Նոյն իսկ զի- տէի թէ կը սիրեմ՝ զի՛ն. չէ՛ որ զինք կոր- սընցնէիս վերջ միայն զգացի թէ կը սիրէի զինք և կը սիրեմ:

Սոլանժ վսեմ և խայթիչ խօսքեր բառաւ, ու- ընց խորութիւնն ու գեղեցկութիւնը հիմա՛ կ'ըմբռնեմ. մարդոց մինչև հիմա չարտասա- նած ամենաբաղդը բաներն ըսաւ ինձի, ու դեռ հիմա՛ կը հասկնամ իմաստը: Ու ես ինձի կը հարցնեմ. «Ո՞րքի կուգար ան, ինչ կեանքով ապրած էր ասկէ առաջ, այդ- քան իմաստութիւն ունենալու համար իր սգիտութեան և չըմեղանքին մէջ:

Այսպէս, միասին կը խօսէինք յաճախ մահուան վրայ:

— Մահուան չեմ վախար, կ'ըսէր նէ, որովհետև վստահ եմ թէ՛ չպիտի մոռնաս զիս: Թող ա՛յսպանամ, հոգ չէ, բաւական է որ զիս յիշես: Այն օրը միայն մարդս կը մեռնի, երբ կը մոռնուի, երբ իրեն ծա- նօթներն մոռնան զինք, և վերջապէս մար- դիկ բու գոյութիւն ունենալը անգամ կ'ու- բանան: Շատ կարճատև է . . . անմահու- թիւնը, շատ կարճատև է . . . և շատ համե- մատական:

Յետոյ, խիստ երկար լուծենէ մը վերջ յարեց Սոլանժ.

— Ըստ իս, ես շատ գեղեցիկ, շատ, շատ գեղեցիկ ըլլալ կուզէի, բեղէ գեղեցիկ պատկեր մը՝ որ ներշնչումս աղբիւր մը, երազի հիմներդ մը ըլլար քեզի համար, զորս կարող ըլլայի գեղեցկեղծի մը մէջ յա- ներծանել: Քեզի տուած երջանիկութիւնս

չրաւեր: Երջակացնէլ ամենակարևոր բանն է, և ամեն մարդ, եթէ ուզէ, կրնայ երջանկացնել. բայց կամենալու . . . է:

* * *

Մեր ամուսնութեան երրորդ տարին, մեծ ճամբորդութիւն մ'ըրինք: Բայց այս ճամբորդութեան ատեն Սօլանտ հիւանդացաւ: Քանի մը օրէն այնքան տկարացաւ որ՝ ա՛լ եղած տեղերնիս մնացինք: Սօլանտ աւելի կը նիւնար գետ. հազ մ'ալ վրան փակաւ. շերմը հասաւ շուտ մը անոր ետեւն, ու վրան մնացած զօրութիւնն ալ լափելով զանի կմախքի դարձուց: Մեր կանգ առած ծովազերեայ պղտիկ քաղաքին մէջ մէկ պանդոկ միայն կար. հոն սենեակ մը վարձեցինք: Բայց այնչափ մեծ էր այդ սենեակը որ յախճապակեայ խոշոր վառարանը չէր կրնար տաքցնել զայն, ու խմ խեղճ սիրականս կը սարսուր անդադար:

Ատիկ զատ Սօլանտ այնքան պղտիկ էր, այնքան պղտիկ որ բոլորովին կը կորսուէր իր մեծ ճերմակ անկողնոյն մէջ: Այն ժամանակ որոշեցի գիշեր ու ցերեկ քովս, ծունկերուս վրայ պահել զնա, ինչպէս մարդ կը գուրգուրայ ջերմահար պղտիկ աղջկան մը վրայ. ի զուր, սակայն, շալերով ու ծածկոցներով կը ծածկէի զինք. ձեռքերը, ոտքերը միշտ պաղ էն:

Բայց և այնպէս, միտքը վերջին ծայր ատող էր. այդչափ ուրախ, այդչափ բարկացող, այդչափ հետաքրքիր երբէք տեսած չէի զինք: Ամեն բան կուրախացնէր, ամեն բան կը բարկացնէր Սօլանտը. կարծես շատ մը զգայնութիւններ մթնեղ կուզէ իրբև թէ վարկեանները իրեն հաշուուած ըլլային: Օրինակի համար, մեր պատուհաններէն — որովհետեւ մեր պատուհանները նաւահանգիստին վրայ կը նայէին — ձկնորսաց նաւակներուն երթնելը, նաւազներու թռչ թռչ շրջելը և ձկնորսներու ընթացքներն ինքնաբերական կերպով կը պատճառէր իրեն: Իսկ իրենց երկար պատմութեաններով, փետուրագրող գլխարկներով պարկերներու նմանող մանր աղջիկներու շարքը զիտեղ՝ կ'ամբողջացնէր իր ուրախութիւնը:

Ատուտ մը, բազկացս մէջ արթննալով, Սօլանտ ըսաւ.

— Այսօր շատ զօրաւոր կ'զգամ ինքզինքըս՝ ապահովապէս այս իրիկուն կրնանք մոկնիլ. ալ ասիկ աւելի մնալ չեմ ուզեր հոս:

Եւ ճերմակ աչքերով յիմարարար ինձի կը նայէր.

— Լաւ, մեկնի՛ք, կը պատասխանէի. բայց պէտք է ընանաս զեւ: Ինչո՞ք, սիրելիս, ընացի՛ր . . .

Յանկարծ ջղային ցնցում մը եւ ըսանի մը վայրկեան զողեր ունեցաւ: Այդտայն մը վարագոյրներէն ներս կը թափանցէր. կեանքին մինչև վերջը միշտ պիտի յիշեմ այդ լոյսին զոյնը: Այն ատեն զգացի մահուան մեր տանը վրայ սաւառնիլը:

— Համբուրէ, զիս, մընչապ Սօլանտ. վերջին անգամ մ'ալ. համբուրէ, զիս . . .

Նստեցուցի զնա ծունկերուս վրայ. և իր շալերուն ծալքին մէջ, կատարեալ կմախքի մը կը նմանէր:

— Հայելի մը տուր ինձ: Կաղաչեմ, կը պաղատիմ:

Եւ հազիւ թէ իր գէմքը նշմարեց անոր մէջ՝ հայելին անդամ նետեց, որ կտոր կըտոր եղաւ:

— Ո՛չ, ո՛չ, չատ տղեղ եմ, ա՛լ մի գիտանի՛ր զիս, ալ մի գիտանի՛ր:

Եւ իր մազերով ձեռքերով, գէմքը կը ծածկէր. հեծկտուրներ երան իր սիրտէն,

արցունքներ սկսան զորով աչքերէն, ու Սօլանտ ըսաւ:

— Ալ ամեն բան ըմբոս է, երազս չիբահանացաւ, և ալ ժամանակ չ'պիտի ունենայ իրականանալու: Ուզեցի որ շատ զեղեցիկ ըլլամ, ամենէն ալ զեղեցիկ որպէսզի չ'մոռնայիր զիս . . . և մեռնելու վերջը, ինձ մէ աւելի զեղեցիկ կեն մը չ'զանկիր . . . չ'տիրէիր . . .

Դեռ կուզէր խօսիլ, բայց հոգեվարքը կը կարկամէր լեզուն, ու իր շրթներէն անկապ ձայներ միայն կ'եղնէին: Եւ ըսանի մը վայրկեանս կարծես սոսկալի յուսահատութեան տագնապի մը մէջ հոգին աւանդեց զուրբ ձեռներուն վրայ յենած:

Ամենասիրելիիս մարմինն իր անկողնոյն վրայ զնեկս վերջ, երբ զինք վեհագոյն օրուան պատրաստելու զրազուեցայ, հարկ եղաւ երեսնէ անջատել մատուրները սրոնցմով՝ ծածկել ուզած էր իր տղեղութիւնը արտասովոր բնագոյով մը:

Հրաշք մը կատարուեց էր. Սօլանտ կերպարանափոխուած էր: Անվերջ, զերմարկային գեղեցկութիւն մը կը փառաւորէր, կը սրբէր, սքանչելի կերպով կը ներդաշնակէր անոր զիմազդերը. ինչ որ կեանքն իրեն կը զրանար, մահը, վեհանձն մահը՝ առատօրէն կուտար իրեն:

Ճերմակ անկողնոյն վրայ, աշնան ծագիկներով պատրաստած հանգուանին մէջ, Սօլանտ մինչև վերջին վայրկեանը, անանկ սքանչելի գեղեցկութիւն մ'ունէր որուն աւելեւ մարդոց սրտերը սարսափած են և տնչացած անոր:

— Ո՛ր Սօլանտ, ազաղակեցի վշտալի, ըստ փափաքդ կը կատարուի: Մոռացութիւնը չ'պիտի մարէ յիշատակդ, և մինչև կեանքիս վերջը մեռած չ'պիտի ըլլաս. ինձ համար գեղեցկիկներուն գեղեցկիկն ես:

Այն ատեն շրթուներուն վրայ լուսաշող ժպիտ մ'իրեցաւ, ժպիտ մը յաղճութեան և զոհունակութեան, ժպիտ մ'ուրախութեան և անմահութեան:

Թարգմ. ՎԱՀԷ

Le Gérant J. MUNIER
Տպագ. «Միութիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՍՆԵԶ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժանութիւնը դրամատուրը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. Մ. Կրօնիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, Ա. Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութիւնէն պաշտօնապէս վստահուած փոխանորդարի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնի լի միջոցաւ ամեն տեսակ գրամական և փոփոխութիւններ, վճիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, զանձուներ: Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պահեստի բաժնիթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին զիմէլ Նիւպառի վրայ փաստարան Ռարթուրի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ դրամ վերկել հետեւալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՆԱԲՈՅԺ
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկունը:

Կը բժշկէ բերնի և ախտայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵՍԵՆՆԻՆԻՆԻԱՆ ԸՆԿ.
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԵՐՁԱԿՆԵՐ
ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿԱՆՑ
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապիմի մեծ պողոտային վրայ Տայիթայի Սանիթի դիմացը, նախկին Ելիսթական գործիներու վաճառատներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմուր Պաս. յաճախորդները, գործի մարբութեան, գինեբու չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար զիմէլ մեր գործատեղին:

ՃԱՅԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՋԱՆՃԵԱՆ
Շաբա Ապու-Սապահ
Նիկու-Տիմիսթի իղիարանին դիմացը.

Օգտատուն ու զուարճայի դիւր. մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու մեղրալար կերակուրներու զանազանութիւնն, անխաղախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով. ահա՛ Գազանձեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վստահ պետք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

ՏՊԱՐԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ. ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԶԻՇԴ ԴԻՍԱՑ
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետախմբեր, մահազգրեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնադրներ, նամակազուրկներ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն. Եւ Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենացն խնամով եւ ճշգրտաւոր սպազրութեամբ:
ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ